



ՊԱՐԶԵՅՎԱԾ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

2022

Բովանդակություն

Խոսք
ընթերցողին 4

Տնտեսությունը
թվերով 5

Բյուջե 2022-ը
թվերով 17

Բյուջեի
եկամուտները 21

Բյուջեի
ծախսերը 31

Բյուջեի
պակասուրդը 68

ՀՀ պետական
պարտքը 71



Funded by
the European Union



ACSES
ARMENIAN CENTER FOR
SOCIO-ECONOMIC STUDIES

Սույն հաշվետվությունը մշակել է Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարությունը ACSES վերլուծական կենտրոնի (Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն) աջակցությամբ «Բաց կառավարման գործընկերություն» (ԲԿԳ) նախաձեռնության շրջանակում՝ Եվրոպական միության (ԵՄ) ֆինանսավորմամբ:

Հաշվետվության բովանդակության պատասխանատվությունը բացառապես ՀՀ ֆինանսների նախարարությանն ու ACSES վերլուծական կենտրոնին է և պարտադիր չէ, որ արտացոլի ԲԿԳ կամ ԵՄ դիրքորոշումները:

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հասցե՝ Երևան, 0010, Մելիք-Ադամյան 1
Հեռախոս՝ (+374 11) 800 600
Ֆաքս՝ (+374 11) 800 132
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am

ACSES վերլուծական կենտրոն

Հասցե՝ Երևան, 0001, Մոսկովյան 3/1
Հեռախոս՝ (+374 33) 200 882
Էլ. փոստ՝ info@acses.am

Խոսք ընթերցողին

- ◆ Սույն ուղեցույցի նպատակն է՝ ընդհանուր գծերով և մատչելի կերպով տեղեկացնել հանրությանը 2022 թվականին տնտեսությունում արձանագրված հիմնական միտումների և պետական բյուջեի կատարման վերաբերյալ:
- ◆ Ուղեցույցում ներկայացված են վերջին 5 տարիներին տնտեսական աճի, գնաճի, գործազրկության մակարդակի, պետության ստացած եկամուտների, դրանց օգտագործման ուղղությունների և պետական պարտքի հիմնական ցուցանիշները, ինչպես նաև երկրի տնտեսությունը բնութագրող մի շարք այլ ցուցանիշներ, որոնք կարող են հետաքրքրել քաղաքացիներին:
- ◆ ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքից հետևյալ [հղումով](#):






Տնտեսությունը թվերով

Հայաստանի համախառն ներքին արդյունքը


ՀՀ ՀՆԱ-ն և դրա փոփոխությունը 2021-2022 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

2022 թվականին ՀՀ ՀՆԱ-ն կազմել է 8 տրիլիոն 497 միլիարդ դրամ: 2021 թվականի համեմատ ՀՆԱ-ն անվանական արտահայտությամբ (առանց հաշվի առնելու գների աճը) աճել է **21.7%**-ով, իսկ իրական արտահայտությամբ (գների աճը հաշվի առնելով) աճել է **12.6%**-ով:

ՀՀ ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով 2021-2022 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

2022 թվականին բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, որը ստացվում է ՀՆԱ ցուցանիշը երկրի բնակչության թվաքանակի վրա բաժանելով, կազմել է **2 միլիոն 862 հազար դրամ**, նախորդ տարվա 2 միլիոն 357 հազար դրամի փոխարեն: 2022 թվականին դոլարային արտահայտությամբ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է 6 հազար 569 ԱՄՆ դոլար:

Տնտեսության մեծությունը և դրա փոփոխությունը (աճ կամ անկում) չափելու համար օգտագործվում է **Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը** (այսուհետ՝ ՀՆԱ): ՀՆԱ-ն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում երկրի ներսում արտադրված վերջնական սպառման ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքը:

- Հայաստանի համախառն ներքին արդյունքը
- Տնտեսական աճը ՀՀ-ում և աշխարհում
- Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շարժընթացը
- Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ՀՀ-ում և աշխարհում
- Գնաճը Հայաստանում
- Գնաճը ՀՀ-ում և աշխարհում
- Աշխատավարձը Հայաստանում
- Աշխատավարձը ՀՀ-ում և աշխարհում
- Գործազրկությունը
- Բանկային համակարգը
- Արտաքին առևտուրը

Հայաստանի համախառն ներքին արդյունքը

Տնտեսական աճը ՀՀ-ում և աշխարհում

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շարժընթացը

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ՀՀ-ում և աշխարհում

Գնաճը Հայաստանում

Գնաճը ՀՀ-ում և աշխարհում

Աշխատավարձը Հայաստանում

Աշխատավարձը ՀՀ-ում և աշխարհում


Գործազրկությունը

Բանկային համակարգը

Արտաքին առևտուրը

Տնտեսական աճը ՀՀ-ում և աշխարհում

ՀՆԱ-ի հավելածի տեմպը Հայաստանում և աշխարհում 2018-2022 թվականներին




Աղբյուր՝ ՀՀ ՎԿ, ԱՄՀ, Համաշխարհային բանկ, Եվրասիական տնտեսական հանձնաժողով

2022 թվականին Հայաստանում արձանագրվել է ՀՆԱ-ի **12.6%** աճ՝ կանխատեսված 7.0%-ի փոխարեն, որը հիմնականում պայմանավորված էր ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով Հայաստանի տնտեսության, մասնավորապես ծառայությունների ոլորտի ակտիվացմամբ:

Հատկանշական է, որ 2022 թվականին Հայաստանի տնտեսությունն աճել է առաջանցիկ տեմպերով՝ գերազանցելով համաշխարհային տնտեսության միջինը **3.7 անգամ**, իսկ միջինից բարձր եկամտային խմբի երկրների միջինը՝ ավելի քան **4 անգամ**:

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շարժընթացը

Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ՀՀ-ում 2018-2022 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2022 թվականին կազմել է 2 միլիոն 863 հազար դրամ, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 21.3%-ով:

2018 թվականից մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշով Հայաստանը գտնվում է միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների խմբում:

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն իրենից ներկայացնում է երկրի ներսում արտադրված վերջնական սպառման ապրանքների և ծառայությունների արժեքը մեկ բնակչի հաշվով:

Հայաստանի համախառն ներքին արդյունքը

Տնտեսական աճը ՀՀ-ում և աշխարհում

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շարժընթացը

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ՀՀ-ում և աշխարհում

Գնաճը Հայաստանում

Գնաճը ՀՀ-ում և աշխարհում

Աշխատավարձը Հայաստանում

Աշխատավարձը ՀՀ-ում և աշխարհում


Գործազրկությունը

Բանկային համակարգը

Արտաքին առևտուրը

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ՀՀ-ում և աշխարհում

Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ՀՀ-ում և մի շարք այլ երկրներում 2022 թվականին



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ, Համաշխարհային բանկ

2022 թվականին մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշով Հայաստանը (\$6,572.0) **գերազանցել է** Մոլդովային (\$5,562.6) և Դրոգատանին (\$1,606.7): Այնուամենայնիվ **զիջել է** այնպիսի համադրելի երկրների, ինչպիսիք են Վրաստանը (\$6,627.7), Բուլղարիան (\$13,772.5), Ռումինիան (\$15,892.1) և այլն:

2022 թվականին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով Հայաստանը բարելավել է իր դիրքերը աշխարհում: Մասնավորապես, ըստ Համաշխարհային բանկի տվյալների, Հայաստանը մեկ շնչի հաշվով ՀՆԱ մեծությամբ 189 երկրների շարքում 2022 թվականին զբաղեցրել է 90-րդ հորիզոնականը՝ 2021 թվականի 105-րդ հորիզոնականի փոխարեն:

- Հայաստանի համախառն ներքին արդյունքը
- Տնտեսական աճը ՀՀ-ում և աշխարհում
- Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շարժընթացը
- Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ՀՀ-ում և աշխարհում
- Գնաճը Հայաստանում
- Գնաճը ՀՀ-ում և աշխարհում
- Աշխատավարձը Հայաստանում
- Աշխատավարձը ՀՀ-ում և աշխարհում
- Գործազրկությունը
- Բանկային համակարգը
- Արտաքին առևտուրը

Հայաստանի համախառն ներքին արդյունքը

Տնտեսական աճը ՀՀ-ում և աշխարհում

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շարժընթացը

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ՀՀ-ում և աշխարհում

Գնաճը Հայաստանում

Գնաճը ՀՀ-ում և աշխարհում

Աշխատավարձը Հայաստանում

Աշխատավարձը ՀՀ-ում և աշխարհում


Գործազրկությունը

Բանկային համակարգը

Արտաքին առևտուրը

Գնաճը Հայաստանում

12-ամսյա գնաճը* ՀՀ-ում 2018-2022 թվականներին



Նշում՝ տվյալ տարվա դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

2022 թվականին Հայաստանում 12-ամսյա գնաճը եղել է **8.3%**, ինչը պայմանավորված էր նախ ռուս-ուկրաինական հակամարտության սրման արդյունքում միջազգային ապրանքահումքային շուկաներում դիտված գների կտրուկ աճով և ՀՀ դրամի

փոխարժեքի կարճատև արժեզրկմամբ, ապա համախառն պահանջարկի զգալի աճով (այդ թվում՝ **ռուսաստանցիների ներհոսքի** կտրուկ ավելացմամբ պայմանավորված):

Հայաստանի համախառն ներքին արդյունքը

Տնտեսական աճը ՀՀ-ում և աշխարհում

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շարժընթացը

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ՀՀ-ում և աշխարհում

Գնաճը Հայաստանում

Գնաճը ՀՀ-ում և աշխարհում

Աշխատավարձը Հայաստանում

Աշխատավարձը ՀՀ-ում և աշխարհում


Գործազրկությունը

Բանկային համակարգը

Արտաքին առևտուրը

Գնաճը ՀՀ-ում և աշխարհում

Սպառողական գների ինդեքսը* ՀՀ-ում և մի շարք այլ երկրներում 2022 թվականին



*Նշում՝ տվյալ տարվա հունվար-դեկտեմբերի միջին գները՝ նախորդ տարվա հունվար-դեկտեմբերի նկատմամբ


Աղբյուր՝ ՀՀ ՎԿ, ԱՄՅ, Եվրասիական տնտեսական հանձնաժողով

2022 թվականին նախորդ տարվա համեմատ Հայաստանում գրանցվել է գների **8.6% աճ**:

Հայաստանում արձանագրված գնաճը ավելի ցածր էր, քան Վրաստանում (11.9%), Ռումինիայում (13.8%), Բելառուսում (15.2%), Էստոնիայում (19.4%):

Աշխատավարձը Հայաստանում

Միջին ամսական անվանական աշխատավարձը ՀՀ-ում 2021-2022 թվականներին



Նշում՝ Նվազագույն սպառողական զամբյուղը հաշվարկված է ԱՐՄՍՍՍՏ-ի կողմից, ըստ Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի: Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Հայաստանում 2022 թվականին **միջին ամսական անվանական աշխատավարձը** կազմել է 236 հազար դրամ՝ 15.5%-ով ավելի, քան 2021 թվականին: **Իրական աշխատավարձը**, որը հաշվի է առնում գների աճը, 2021 թվականի համեմատ աճել է 6.3%-ով:

Նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը, այն է՝ բնակչության նվազագույն սպառողական կարիքները, 2022 թվականի IV եռամսյակի միջին ընթացիկ գներով կազմել է **77 հազար 740 դրամ**՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով շուրջ 8.6%-ով:

Աշխատավարձի աճին հիմնականում նպաստել է տեղեկատվական տեխնոլոգիաների, մեծածախ և մանրածախ առևտրի, ինչպես նաև ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտների աշխատավարձերի աճը:

- Հայաստանի համախառն ներքին արդյունքը
- Տնտեսական աճը ՀՀ-ում և աշխարհում
- Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շարժընթացը
- Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ՀՀ-ում և աշխարհում
- Գնաճը Հայաստանում
- Գնաճը ՀՀ-ում և աշխարհում
- Աշխատավարձը Հայաստանում**
- Աշխատավարձը ՀՀ-ում և աշխարհում
- Գործազրկությունը
- Բանկային համակարգը
- Արտաքին առևտուրը

Հայաստանի համախառն ներքին արդյունքը

Տնտեսական աճը ՀՀ-ում և աշխարհում

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շարժընթացը

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ՀՀ-ում և աշխարհում

Գնաճը Հայաստանում

Գնաճը ՀՀ-ում և աշխարհում

Աշխատավարձը Հայաստանում

Աշխատավարձը ՀՀ-ում և աշխարհում


Գործազրկությունը

Բանկային համակարգը

Արտաքին առևտուրը

Աշխատավարձը ՀՀ-ում և աշխարհում

Միջին ամսական անվանական աշխատավարձը ՀՀ-ում և մի շարք այլ երկրներում 2022 թվականին



Աղբյուր՝ Ազգային վիճակագրական ծառայություններ

2022 թվականին միջին ամսական աշխատավարձը Հայաստանում դոլարային արտահայտությամբ կազմել է **540.8 ԱՄՆ դոլար**, ինչը գերազանցում է Դրոզգստանի ցուցանիշը (\$315.5) և գրեթե հավասար է Վրաստանում գրանցված միջին ամսական աշխատավարձին (\$545.8):

Այս ցուցանիշով Հայաստանը դեռևս հետ է մնում այնպիսի համադրելի երկրներից, ինչպիսիք են Մոլդովան (\$557.0) և Հյուսիսային Մակեդոնիան (\$813.2):

Հայաստանի համախառն ներքին արդյունքը

Տնտեսական աճը ՀՀ-ում և աշխարհում

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շարժընթացը

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ՀՀ-ում և աշխարհում

Գնաճը Հայաստանում

Գնաճը ՀՀ-ում և աշխարհում

Աշխատավարձը Հայաստանում

Աշխատավարձը ՀՀ-ում և աշխարհում


Գործազրկությունը

Բանկային համակարգը

Արտաքին առևտուրը

Գործազրկությունը

Ջբաղվածները, գործազուրկները, գործազրկության մակարդակը 2021-2022 թվականներին



2022 թվականին Հայաստանում գործազուրկների թիվը նվազել է **14.5%**-ով կամ շուրջ 29 հազար մարդով և կազմել է 170 հազար մարդ, իսկ զբաղվածների թիվը աճել է **4.7%**-ով կամ շուրջ 51 հազարով և կազմել 1 միլիոն 139 հազար մարդ:

2022 թվականին Հայաստանում գործազրկության մակարդակը կազմել է **13.0%**՝ նախորդ տարվա 15.5%-ի փոխարեն:

Գործազուրկ է համարվում այն անձը, ով չունի աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք, ակտիվորեն փնտրում է աշխատանք և պատրաստ է անմիջապես անցնել աշխատանքի:

Գործազրկության մակարդակը գործազուրկների տեսակարար կշիռն է աշխատուժի մեջ: Աշխատուժի մեջ ներառվում են զբաղվածները և գործազուրկները, ովքեր ստեղծում են աշխատանքի շուկան (աշխատուժի առաջարկի մասով)՝ ապրանքների արտադրության և ծառայությունների տրամադրման համար:

Բանկային համակարգը


Մինչև 1 տարի ժամկետով վարկերի և ավանդների միջին տարեկան տոկոսադրույքները 2021-2022 թվականներին

	2021	2022	Փոփոխությունը, %-ային կետ
Վարկեր դրամով, %	11.8	11.7	-0.1
Վարկեր արտարժույթով, %	7.8	7.8	0
Ավանդներ դրամով, %	8.2	8.4	0.2
Ավանդներ արտարժույթով, %	1.9	1.9	0

Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

2021 թվականի համեմատ 2022 թվականին վարկերի և ավանդների տոկոսադրույքները հիմնականում մնացել են անփոփոխ, աննշան՝ **0.1%**-ով, նվազել է դրամային վարկերի միջին տոկոսադրույքը և **0.2%**-ով ավելացել դրամային ավանդների միջին տոկոսադրույքը:

ՀՀ բանկային համակարգի ցուցանիշները 2018-2022 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՎԿ

2022 թվականին անվանական ՀՆԱ-ն աճել է ավելի արագ տեմպերով, քան վարկերի ընդհանուր մեծությունը, արդյունքում 2022 թվականի տարեվերջին վարկեր/ՀՆԱ հարաբերությունը եղել է **45.9%**՝ 7 տոկոսային կետով ավելի քիչ, քան 2021 թվականի տարեվերջին: Միևնույն ժամանակ, քանի որ դիտվել է ֆինանսական միջոցների ներհույսը Հայաստան, ավանդներ/ՀՆԱ հարաբերությունը աճել է 2 տոկոսային կետով՝ հասնելով **60.3%**-ի:

Հայաստանի համախառն ներքին արդյունքը

Տնտեսական աճը ՀՀ-ում և աշխարհում

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շարժընթացը

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ՀՀ-ում և աշխարհում

Գնաճը Հայաստանում

Գնաճը ՀՀ-ում և աշխարհում

Աշխատավարձը Հայաստանում

Աշխատավարձը ՀՀ-ում և աշխարհում


Գործազրկությունը

Բանկային համակարգը

Արտաքին առևտուրը

Արտաքին առևտուրը

Ապրանքների արտահանումը և ներմուծումը 2021-2022 թվականներին




Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

2022 թվականին ՀՀ-ից ապրանքների արտահանումը կազմել է **5 միլիարդ 360 միլիոն ԱՄՆ դոլար**՝ 77.7%-ով ավելի, քան նախորդ տարի: Ներմուծումը նախորդ տարվա համեմատ աճել է 63.5%-ով՝ կազմելով 8 միլիարդ 769 միլիոն ԱՄՆ դոլար:

ՀՀ արտահանման և ներմուծման ամենախոշոր գործընկերը Ռուսաստանն է: 2022 թվականին Հայաստանից արտահանված ապրանքների **45.4%**-ը ուղղվել է Ռուսաստան, իսկ ներմուծման **30.1%**-ը եկել է Ռուսաստանից:


Նախորդ տարվա համեմատ 2022 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալները (հաշվի չառած գների աճը) աճել են **54.5%**-ով, իսկ ներմուծման իրական ծավալները (հաշվի չառած գների աճը)՝ **33.8%**-ով:

Ապրանքների արտահանումն ըստ հիմնական գործընկերների 2022 թվականին



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Ապրանքների ներմուծումն ըստ հիմնական գործընկերների 2022 թվականին



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ

Հայաստանի համախառն ներքին արդյունքը

Տնտեսական աճը ՀՀ-ում և աշխարհում

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շարժընթացը

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ՀՀ-ում և աշխարհում

Գնաճը Հայաստանում

Գնաճը ՀՀ-ում և աշխարհում

Աշխատավարձը Հայաստանում

Աշխատավարձը ՀՀ-ում և աշխարհում

Գործազրկությունը

Բանկային համակարգը

Արտաքին առևտուրը



Բյուջե 2022-ը թվերով

Համախմբված բյուջեն

Համախմբված բյուջե

Պետական բյուջեն և համայնքների բյուջեները կազմում են Հայաստանի Հանրապետության **համախմբված բյուջեն** (առանց միջբյուջետային փոխանցումների):

Պետական բյուջե

Եկամուտներ

2,063.1
մլրդ. դրամ **22.5 % ↑**

Ծախսեր

2,242.6
մլրդ. դրամ **11.9 % ↑**

Պակասուրդ

179.5
մլրդ. դրամ **44.0 % ↓**

Եկամուտներ

2,132.9
մլրդ. դրամ **22.3 % ↑**

Ծախսեր

2,322.4
մլրդ. դրամ **12.6 % ↑**

Պակասուրդ

189.5
մլրդ. դրամ **40.4 % ↓**

Համայնքների բյուջե

Եկամուտներ

189.9
մլրդ. դրամ **8.2 % ↑**

Ծախսեր


199.9
մլրդ. դրամ **15.5 % ↑**

Պակասուրդ

10.1
մլրդ. դրամ **525.1 % ↓**

Պետական բյուջեի կատարողականը

2022 թվականի պետական բյուջեի կատարողականը




Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2022 թվականին ՀՀ պետական բյուջեի **եկամուտները** կազմել են անկախ Հայաստանի պատմության մեջ ռեկորդային բարձր **2 տրիլիոն 63 միլիարդ դրամ**, ինչը 22.5%-ով ավելին է, քան 2021 թվականին և 5.9%-ով ավելի, քան կառավարության նախնական պլանը:

Պետական բյուջեի **ծախսերը** կազմել են **2 տրիլիոն 243 միլիարդ դրամ** շուրջ 11.9%-ով ավելի, քան նախորդ տարի և 2.7%-ով ավելի, քան կառավարությունը ի սկզբանե պլանավորում էր: Պետական բյուջեի **պակասուրդը** 2022 թվականին կազմել է շուրջ **180 միլիարդ դրամ**՝ 44.0%-ով քիչ, քան 2021 թվականին և 24.0%-ով քիչ, քան կառավարության նախնական պլանը:

Պետական բյուջեն և ՀՆԱ-ն

Պետական բյուջեի կատարողականը 2018-2022 թվականներին




An aerial photograph of a mountain range during sunset. The mountains are illuminated with warm, golden light, and a river flows through a valley in the foreground. A yellow horizontal bar is positioned above the main title text.

Բյուզեի Եկամուտները

Ազատի քամբար, Հայաստան
Լուսանկարը Մուշեղ Հակոբյանի

Պետական բյուջեի եկամուտների կատարողականը

2022 թվականի բյուջեի եկամուտների կատարողականը




Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2022 թվականին պետական բյուջե են մուտքագրվել 2 տրիլիոն 63 միլիարդ դրամ փաստացի եկամուտներ՝ 0.2%-ով կամ 4 միլիարդ 905 միլիոն դրամով գերազանցելով կառավարության ճշտված ծրագրով նախատեսված ցուցանիշը:

Պետական բյուջեի եկամուտների ծրագրային ցուցանիշի գերակատարմանը մեծապես նպաստել են բյուջեի այլ եկամուտները, որոնք գերակատարվել են 8 միլիարդ 853 միլիոն դրամով կամ 7.8%-ով:

Բյուջեի փաստացի եկամուտները 2021-2022 թվականներին




Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2022 թվականին 2021 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 22.5%-ով կամ 379 միլիարդ դրամով, ինչը հիմնականում տեղի է ունեցել պետական բյուջե վճարված հարկերի և տուրքերի աճի շնորհիվ:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ավելացմանը զգալիորեն նպաստել են ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով 2022 թվականին Հայաստանում արձանագրված տնտեսական ակտիվության աճը, արտահանման և ներմուծման աճը, ինչպես նաև աշխատատեղերի ու միջին աշխատավարձի ավելացումը:

Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը

Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը 2021-2022 թվականներին




2022 թվականին պետական բյուջեի եկամուտների **93.4%-ը** կամ 1 տրիլիոն 926 միլիարդ դրամը ձևավորվել է պետական բյուջե վճարված հարկերի և տուրքերի հաշվին, **0.7%-ը** կամ 15 միլիարդ դրամը՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների տրամադրած դրամաշնորհների հաշվին և **5.9%-ը** կամ 122 միլիարդ դրամը՝ այլ եկամուտներից, որոնց մեջ մտնում են պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարները, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինները, պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց վճարները (տոկոսներ) և այլն:

Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Հարկային եկամուտները

2022 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը ըստ եկամտատեսակների




Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Հարկային եկամուտների և պետական տուրքերի աճը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի գծով մուտքերի աճով: 2021 թվականի համեմատ գրեթե բոլոր հարկատեսակների գծով արձանագրվել է **մուտքերի աճ**, բացառությամբ մաքսատուրքի:

2022 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ցուցանիշի վրա զգալի դրական ազդեցություն են ունեցել տնտեսական ակտիվության, ներմուծման և արտահանման աճը, հարկունակ ոլորտների իրացման շրջանառությունների, աշխատատեղերի ու միջին աշխատավարձի ավելացումը:

Հարկային եկամուտների կառուցվածքը

Պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքը 2021-2022 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2022 թվականին հարկային եկամուտների ու տուրքերի գծով մուտքերի շուրջ **60.0%**-ը ձևավորվել է ավելացված արժեքի հարկի (35.3%) և եկամտային հարկի (24.7%) հաշվին:

Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի տեսակարար կշռի աճը և եկամտային հարկի տեսակարար կշռի նվազումը հիմնականում պայմանավորված են օրենսդրական փոփոխություններով, իսկ մաքսատուրքի տեսակարար կշռի նվազումը՝ ԵԱՏՄ շրջանակներում ՌԴ կողմից փոխանցված մաքսատուրքի նվազմամբ:

Եկամուտների կատարողականը

Եկամուտների կառուցվածքը

Հարկային եկամուտները

Հարկային եկամուտների կառուցվածքը

Բյուջեի եկամուտները և ՀՆԱ-ն

Հարկային եկամուտները ՀՀ-ում և աշխարհում


Հարկային եկամուտների գծով բյուջեից վերադարձված գումարները

Մուտքագրված դրամաշնորհները

Այլ եկամուտները

Բյուջեի եկամուտները և ՀՆԱ-ն

ՀՀ պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ 2018-2022 թվականներին




Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2022 թվականին պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը փոքր ինչ բարելավվել է կազմելով **24.3%** նախորդ տարվա 24.1%-ի դիմաց:

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ ցուցանիշը 2022 թվականին կազմել է **22.7%** և 2021 թվականի փաստացի ցուցանիշի համեմատ մնացել է անփոփոխ:

Հարկային եկամուտները ՀՀ-ում և աշխարհում

Պետական բյուջեի հարկային եկամուտները ՀՆԱ նկատմամբ ՀՀ-ում և մի շարք այլ երկրներում 2022 թվականին




Աղբյուր՝ Ազգային վիճակագրական ծառայություններ

Հարկային եկամուտներ/ ՀՆԱ ցուցանիշով 2022 թվականին Հայաստանը (22.7%) գերազանցել է այնպիսի համադրելի երկրների, ինչպիսիք են Մոլդովան (21.0%) և

Վրաստանը (20.9%), սակայն գիջել է օրինակ Ղրղզստանին (23.6%):

Հարկային եկամուտների գծով բյուջեից վերադարձված գումարները

Հարկային եկամուտների գծով պետական բյուջեից վերադարձված գումարները 2021-2022 թվականներին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2022 թվականին պետական բյուջեից ԱԱՀ-ի, եկամտային հարկի և ակցիզային հարկի գծով հարկատուներին է վերադարձվել շուրջ **262 միլիարդ դրամ**՝ 45.3% ով կամ շուրջ 82 միլիարդ դրամով ավելի, քան նախորդ տարի:


Եթե վերադարձված գումարները գանձվեին պետական բյուջե, ապա բյուջեի հարկային եկամուտների աճը 2022 թվականին կկազմեր 23.8%՝ փաստացի գրանցված 21.4%-ի փոխարեն:

Վերջին 5 տարիների ընթացքում բյուջեից վերադարձված եկամտային հարկի գումարները **աճել են 10 անգամ**, իսկ ԱԱՀ գծով վերադարձված գումարները՝ **3 անգամ**:

Համաձայն ՀՀ օրենսդրության՝ պետությունը որոշակի պարբերականությամբ հարկ վճարողներին է վերադարձնում պետական բյուջե վճարված հարկերի մի մասը: Օրինակ, պետությունը արտահանողներին փոխհատուցում է վճարված ԱԱՀ գումարները կամ առաջնային շուկայից ձեռքբերված անշարժ գույքի հիպոտեկային վարկի վճարված տոկոսների չափով վարկառուներին է վերադարձնում պետական բյուջե վճարած եկամտային հարկի գումարները:

Պետական բյուջե մուտքագրված դրամաշնորհները

2022 թվականին ստացված պաշտոնական դրամաշնորհներն ըստ դոնորների



2022 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են շուրջ **15 միլիարդ դրամ** պաշտոնական դրամաշնորհներ:


2022 թվականին ՀՀ-ին տրամադրված պաշտոնական դրամաշնորհների **խոշորագույն միջազգային դոնորը** եղել է ԵՄ-ն՝ 6 միլիարդ 592 միլիոն դրամ ֆինանսավորմամբ (44.0%), որին հաջորդում են Համաշխարհային բանկը՝ 2 միլիարդ 461 միլիոն դրամ ֆինանսավորմամբ (16.4%) և Գլոբալ հիմնադրամ՝ 1 միլիարդ 774 միլիոն դրամ ֆինանսավորմամբ (11.8%):

Պաշտոնական դրամաշնորհները այն հատկացումներն են, որոնք օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվում են ՀՀ-ին անժամկետ, անհատույց և անվերադարձ:

Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Պետական բյուջեի այլ եկամուտները

2022 թվականի պետական բյուջեի այլ եկամուտների աղբյուրները



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Ընդհանուր առմամբ 2022 թվականի պետական բյուջեի եկամուտների 5.9%-ը կամ 122 միլիարդ դրամը ձևավորվել է այլ եկամուտներից, որոնց մեջ մտնում են տոկոսային եկամուտները, ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտները, իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը և պետական գույքի վարձակալությունից ստացվող եկամուտները:

Երբ պետությունը ունենում է ժամանակավոր ազատ միջոցներ, դրանց մի մասը ավանդադրում է բանկերում, որի դիմաց ստանում է **տոկոսավճարներ** (տոկոսային եկամուտ): 2022 թվականի պետական բյուջեի եկամուտների 2.4%-ը կամ շուրջ 50 միլիարդ դրամը ձևավորվել է պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների հաշվին:

Պետությունը՝ ի դեմս կառավարության, հանդիսանում է բաժնետեր նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող առանձին ձեռնարկություններում, օրինակ՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում, որոնց գործունեության արդյունքում ձևավորված գուտ շահույթի մի մասը շահաբաժնի տեսքով փոխանցվում է պետական բյուջե:




Բյուզեի ծախսերը

Աժդահան լեռ, Բայաստան
Լուսանկարը՝ Անի Արհայրազյանի

Պետական բյուջեի ծախսերի կատարողականը

Պետական բյուջեի ծախսերի կատարողականը 2022 թվականին




Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2022 թվականին պետական բյուջեի ծախսերը կազմել են **2 տրիլիոն 243 միլիարդ դրամ**՝ 2%-ով կամ 45 միլիարդ 337 միլիոն դրամով պակաս, քան կառավարության ճշտված ծրագրով նախատեսված ցուցանիշը:

Ընթացիկ ծախսերի մեջ են մտնում կենսաթոշակների ու նպաստների վճարումը, պետական հատվածի աշխատողների վարձատրությունը, պետական պարտքի սպասարկման տոկոսավճարների վճարումը և այլն:

Պետական բյուջեի փաստացի ծախսերը 2021-2022 թվականներին




Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

2022 թվականին 2021 թվականի համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են **11.9%**-ով կամ 238 միլիարդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված էր կապիտալ ծախսերի աճով:

Կապիտալ ծախսերի մեջ են մտնում դպրոցների, հիվանդանոցների, ճանապարհների շինարարությունը, վերակառուցումը, մեքենաների և սարքավորումների ձեռքբերումը և այլն:

Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը

2022 թվականի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման



Նշում՝ Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների մեջ մտնում են ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսեր) և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը: Աղբյուր՝ ՀՀ ՀՏ

2022 թվականին պետական բյուջեի ծախսերի **27.3%**-ը կամ 613 միլիարդ դրամն ուղղվել է նպաստների և կենսաթոշակների վճարմանը, ինչը 1.3%-ով կամ 8 միլիարդ դրամով ավելի քիչ է, քան նախորդ տարի:

2022 թվականին ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 380 միլիարդ 394 միլիոն դրամ, որը ներառում է կապիտալ ծախսերը (389 միլիարդ դրամ) և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը (8 միլիարդ 725 միլիոն դրամ):


Պետական բյուջեի ծախսերի **17.4%**-ը կամ 389 միլիարդ դրամ ուղղվել է կապիտալ ծախսերի իրականացմանը: 2022 թվականին 2021 թվականի համեմատ պետական բյուջեի կապիտալ ծախսերը աճել են շուրջ **78.2%**-ով կամ 170 միլիարդ 720 միլիոն դրամով:

Պետական բյուջեի ծախսերի երրորդ խոշոր խումբը դրամաշնորհների գծով ծախսերն են, որոնք ներառում են պետական մարմիններին և համայնքներին անհատույց տրամադրվող հատկացումներ: 2022 թվականին պետական բյուջեից տրամադրվել է **239 միլիարդ դրամ**ի չափով դրամաշնորհ (ընդհանուր ծախսերի շուրջ 11.0%-ը), ինչը շուրջ 17.0%-ով կամ 34 միլիարդ դրամով ավելին է, քան նախորդ տարի:

2022 թվականին պետական բյուջեից ծախսված **ամեն 1000 դրամից 273 դրամ**ն ուղղվել է կենսաթոշակների և նպաստների վճարմանը:

Բյուջեի ծախսերի ոլորտային կառուցվածքը


2022 թվականի պետական բյուջեի ծախսերն ըստ ոլորտների



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Բյուջեի կատարողականը ըստ մարմինների

2022 թվականի պետական բյուջեի ծախսերն ըստ պատասխանատու մարմինների




Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված ծրագրերի թիվը կազմել է **175**, որոնցից փաստացի միջոցներ են օգտագործվել 171-ի գծով: Ծրագրերի շրջանակներում նախատեսված 977 միջոցառումներից ամբողջությամբ կամ մասնակի կատարվել է 944-ը՝ 46 պետական մարմինների պատասխանատվությամբ:

Պետական բյուջեի փաստացի ծախսերում **ամենամեծ տեսակարար կշիռներն** ունեցել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերը՝ **27.4%**, և ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերը՝ **21.4%**:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ԱՄՅՆ ծախսերի կառուցվածքը 2022 թվականին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

16 ✓
Իրականացված ծրագրեր

613.6 ^{ՄԼՐԴ ԴՐԱՄ}
Ծախսեր **1.0 %** ↓

98.9 %
Կատարողական

Ծախսերի կատարողականը

Ծախսերի կառուցվածքը

Ծախսերի ոլորտային կառուցվածքը

Կատարողականը ըստ մարմինների

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Պաշտպանության նախարարություն

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Ֆինանսների նախարարություն


Առողջապահության նախարարություն

Ոստիկանություն

Էկոնոմիկայի նախարարություն


Ազգային անվտանգության ծառայություն

Կենսաթոշակային ապահովություն



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Սոցիալական ապահովություն



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

251.4 ՄԼՐ ԴՐԱՄ ↑
Աշխատանքային կենսաթոշակներ

100 %
Կատարողական

443,544 Ս
Կենսաթոշակառուների թիվ

118.7 ՄԼՐ ԴՐԱՄ ↑
Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին

99.8 %
Կատարողական

456,529 Ս
Մասնակիցների թիվ

36.9 ՄԼՐ ԴՐԱՄ ↑
Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ

99.9 %
Կատարողական

34,809 Ս
Կենսաթոշակառուների թիվ

24,813 Ս
Երկարամյա ծառայության կենսաթոշակառուների թիվ

8,990 Ս
Հաշմանդամության գինվորական կենսաթոշակառուների թիվ

1,006 Ս
Զինծառայողի մահվան դեպքում նրա ընտանիքի անդամների կերակրողին կորցնելու դեպքում գինվորական կենսաթոշակառուների թիվ

33.3 ՄԼՐ ԴՐԱՄ ↑
Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ

100 %
Կատարողական

14,463 Ս
Ծերության նպաստառուների թիվ

82,780 Ս
Նպաստառուների թիվ

55,492 Ս
Հաշմանդամության նպաստառուների թիվ


12,825 Ս
Կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուների թիվ

4.5 ՄԼՐ ԴՐԱՄ ↑
Կենսաթոշակ, ծերության նպաստ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ կամ հաշմանդամության նպաստ ստանալու իրավունք ունեցող անձանց մահվան դեպքում տրվող թաղման նպաստ

96.9 %
Կատարողական

22,730 Ս
Թաղման նպաստ ստացողների թիվ


Ժողովրդագրական վիճակի բարելավում



Աղբյուր՝ ՀՀ ՏՆ

<p>15.4 ՄԼՐԴ ԴՐԱՍ ↗</p> <p>Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրում</p>	<p>98.4 %</p> <p>Կատարողական</p>	<p>42,129 👤</p> <p>Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող քաղաքացիների թիվ</p>
<p>19.4 ՄԼՐԴ ԴՐԱՍ ↗</p> <p>Երեխայի ծննդյան միանվագ նպաստ</p>	<p>96.3 %</p> <p>Կատարողական</p>	<p>35,742 👤</p> <p>Ընդհանուր շահառու տրածիներ թիվ</p>
<p>23,566 👤</p> <p>Ընտանիքում 1-ին և 2-րդ երեխաների թիվ</p>	<p>11,616 👤</p> <p>Ընտանիքում 3-րդ և 4-րդ երեխաների թիվ</p>	<p>560 👤</p> <p>Ընտանիքում 5 և հաջորդ երեխաների թիվ</p>
<p>3.0 ՄԼՐԴ ԴՐԱՍ ↗</p> <p>Դրամական աջակցություն ընտանիքում 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին</p>	<p>99.0 %</p> <p>Կատարողական</p>	<p>5,078 👤</p> <p>Շահառու ընտանիքներ (յուրաքանչյուր երեխայի համար դիմած)</p>
<p>2.1 ՄԼՐԴ ԴՐԱՍ ↗</p> <p>Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն</p>	<p>99.8 %</p> <p>Կատարողական</p>	<p>3,088 👤</p> <p>Շահառուների թվաքանակ (երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության բաղադրիչ)</p>
<p>509 👤</p> <p>Շահառուների թվաքանակ (մարզային բնակավայրերում բնակարան ձեռք բերելու համար միանվագ դրամական աջակցության բաղադրիչ)</p>	<p>1,025 👤</p> <p>Շահառուների թվաքանակ (երիտասարդ ընտանիքների համար կանխավճարի ապահովագրության բաղադրիչ)</p>	<p>1,554 👤</p> <p>Շահառուների թվաքանակ (երեխայի ծննդով պայմանավորված՝ հիփոթեքային վարկ մարող ընտանիքներին դրամական աջակցության բաղադրիչ)</p>

Անապահով սոցիալական խմբերին աջակցություն




Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

27.2 մլրդ դրամ ↑
Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ

99.6 %
Կատարողական

76,631 👤
Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքների թիվ

Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

14.4 մլրդ դրամ ↑
Մայրության նպաստ

99.9 %
Կատարողական

17,757 👤
Մայրության նպաստ ստացող աշխատող անձանց թիվ

20,047 👤
Մայրության նպաստ ստացող չաշխատող անձանց թիվ


5.6 մլրդ դրամ ↑
Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստ

100 %
Կատարողական

1,845,127 🗳️
Ժամանակավոր անաշխատունակության օրերի թիվ

Պաշտպանության նախարարություն

ՊՆ ծախսերի կառուցվածքը 2022 թվականին



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ


5 ✓
Իրականացված ծրագրեր

479.6 ՄԼՐԴ ԴՐԱՄ **42.4 %** ↑
Ծախսեր

99.9 %
Կատարողական

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

ՏԿԵՆ ծախսերի կառուցվածքը 2022 թվականին




24 ✓✓
Իրականացված
ծրագրեր

223.3 ՄԼՐԴ ԴՐԱՄ **10.9% ↑**
Ծախսեր

94.9 %
Կատարողական

Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Տարածքային զարգացում



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

64.3 ՄԼՐԴ ԴՐԱՄ ↗

Ֆինանսական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին

100%

Կատարողական

502 ♻️

Շահառու համայնքների թիվը

18.4 ՄԼՐԴ ԴՐԱՄ ↗

ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով

96.2%

Կատարողական

340 ♻️

Համայնքների թիվը

1.5 ՄԼՐԴ ԴՐԱՄ ↗

Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծում

98.1%

Կատարողական

117 ♻️

Փոխհատուցում ստացող շահառուների քանակ

311,300 🧑

Շահառուների թիվ

8,505 մ²

Մետաղյա պաշտպանիչ ցանցի կառուցում


4,915 մ

Մետաղական ճոպանների անցկացում

128 🏠


ՀՀ Լոռու մարզի Սպիտակ և Ստեփանավան համայնքներին նվիրաբերվող բնակարանների թիվը (հետագայում համայնքների կողմից բնակիչների հետ նվիրատվության պայմանագիր կնքելու նպատակով)

Ճանապարհային ցանցի բարելավում



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

Ոռոգման համակարգի առողջացում




Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

47.8 մլրդ դրամ ↑ Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում	93.1% Կատարողական	301.5 կմ Հիմնանորոգված ճանապարհների երկարությունը
11.5 մլրդ դրամ ↑ Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագիր	84.7% Կատարողական	20.9 կմ Լանջիկ-Գյումրի 27.47 կմ երկարությամբ ճանապարհի վերականգնված ճանապարհահատված
5.6 մլրդ դրամ ↑ ԱԶԲ և ԵՆԲ աջակցությամբ իրականացվող Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի ծրագիր	92.3% Կատարողական	51.1 կմ Վերականգնված ճանապարհահատված
		10 հատ ճանապարհների վրա վտանգավոր կետերի վերացում

9.4 մլրդ դրամ ↑ Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում	100% Կատարողական	15 ☒ Աջակցություն ստացող ոռոգման համակարգի ընկերությունների թիվ
609.8 մլն մ³ Ջրամատակարարման ծավալ		90,211 հա Ոռոգելի հողատարածքների մակերես
3.8 մլրդ դրամ ↑ Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման ծրագիր	85.0% Կատարողական	16 մ Պատվարի կառուցում
3.7 մլրդ դրամ ↑ Եվրասիական Ջարգացման Բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր	91.5% Կատարողական	73.4 կմ Հիմնանորոգված ոռոգման ցանցերի երկարություն

- Ծախսերի կատարողականը
- Ծախսերի կառուցվածքը
- Ծախսերի ոլորտային կառուցվածքը
- Կատարողականը ըստ մարմինների
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- Պաշտպանության նախարարություն
- Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
- Ֆինանսների նախարարություն
- Առողջապահության նախարարություն
- Ոստիկանություն
- Էկոնոմիկայի նախարարություն
- Ազգային անվտանգության ծառայություն

Քաղաքային զարգացում




Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

<p>3.1 մլրդ հրաք ↗</p> <p>Երևան քաղաքի փողոցների ճանապարհաշինարարական աշխատանքներ</p>	<p>94.9%</p> <p>Կատարողական</p>	<p>609 հատ</p> <p>Վերանորոգված փողոցների թիվ</p>	<p>548,000 մ²</p> <p>Վերանորոգված փողոցներ</p>
<p>2.7 մլրդ հրաք ↗</p> <p>Երևանի մետրոպոլիտենով ուղևորափոխադրման ծառայությունների գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացում</p>	<p>94.9%</p> <p>Կատարողական</p>	<p>907 հատ</p> <p>Վերանորոգված մայթերի, բակային տարածքների և միջբակային տարածքների թիվ</p>	<p>95%</p> <p>Վերանորոգված փողոցների և բակերի տեսակարար կշիռը Երևանի փողոցների և բակերի ընդհանուր թվում</p>
<p>3.9 մլրդ հրաք ↗</p> <p>Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագիր</p>	<p>87.1%</p> <p>Կատարողական</p>	<p>5.2%</p> <p>Բարաքանյան-Աշտարակի խճուղի 9.4 կմ երկարությամբ և 24 մ միջին լայնությամբ նոր ճանապարհահատվածի կառուցում</p>	<p>25%</p> <p>Արգավանդ-Շիրակ ծանապարհահատվածի 2.7 կմ երկարությամբ (ներառյալ Հրազդան գետի վրա կամուրջի) կառուցում</p>
<p>1.2 մլրդ հրաք ↗</p> <p>Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր</p>	<p>77.7%</p> <p>Կատարողական</p>	<p>9 հատ</p> <p>Հիմնանորոգվող փողոցների (միջինը 9.5 մ լայնությամբ և 16.75 կմ երկարությամբ) թիվը</p>	<p>9 հատ</p> <p>Հարակից մայթերով (միջինում 4 մ լայնությամբ) հիմնանորոգման ենթակա փողոցների թիվը</p>
		<p>9 հատ</p> <p>Փողոցների անձրևաջրերի հեռացման համակարգի հիմնանորոգում</p>	<p>9 հատ</p> <p>Լուսավորության համակարգի հիմնանորոգում լուսակետ հենասյունով</p>

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ԿԳՄՄՆ ծախսերի կառուցվածքը 2022 թվականին




Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

21 ✓
Իրականացված ծրագրեր

202.6 ՄԼՐԴ ԴՐԱՄ **15.9% ↑**
Ծախսեր

97.3 %
Կատարողական

Հանրակրթության ծրագիր




Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

<p>33.7 ՄԼՐԴ ԴՐԱՄ ↗</p> <p>Տարրական ընդհանուր հանրակրթություն</p>	<p>99.6 %</p> <p>Կատարողական</p>	<p>150,750 👤</p> <p>Տարրական ընդհանուր կրթության դասարանների սովորողների թիվը</p>
<p>42.4 ՄԼՐԴ ԴՐԱՄ ↗</p> <p>Հիմնական ընդհանուր հանրակրթություն</p>	<p>99.8 %</p> <p>Կատարողական</p>	<p>180,803 👤</p> <p>Հիմնական ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին տարեկան թիվը</p>
<p>17.1 ՄԼՐԴ ԴՐԱՄ ↗</p> <p>Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն</p>	<p>100 %</p> <p>Կատարողական</p>	<p>58,598 👤</p> <p>Միջնակարգ ընդհանուր կրթության դասարանների սովորողների միջին տարեկան թիվը</p>
		<p>8</p> <p>Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը</p>
		<p>13</p> <p>Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը</p>
		<p>13</p> <p>Գիտելիքների ստուգման արդյունքում սովորողների միջին գնահատականը</p>

- Ծախսերի կատարողականը
- Ծախսերի կառուցվածքը
- Ծախսերի ոլորտային կառուցվածքը
- Կատարողականը ըստ մարմինների
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- Պաշտպանության նախարարություն
- Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
- Ֆինանսների նախարարություն
- Առողջապահության նախարարություն
- Ոստիկանություն
- Էկոնոմիկայի նախարարություն
- Ազգային անվտանգության ծառայություն

Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ

12.5 ՄԼՐԴ ԴՐԱՄ ↗

Գիտական ենթակառուցվածքի արդիականացում

5

Գիտության ոլորտում համագործակցող գիտական կառույցների թիվ

3

Պետական բյուջեից ֆինանսավորված երիտասարդ գիտնականների դպրոցների թիվ

99.8 %

Կատարողական

5

Միջազգային գիտական կառույցների թիվ, որոնց անդամակցում է ՀՀ-ն

196

Գիտական հայտերի փորձաքննությունների քանակ

1

